նուց: Բազմաթիվ էին նաև ոչ արքունական գյուղերում բանող ձիթահանքերը: Ինչպես ջաղացները, նույնպես և սրանուցները կազմում էին մասնավոր անհատների և ընտանիքների սեփականություն: Սրանց մեջ իր ընդարձակությամբ և հաստահիմն կառուցվածքով, ինչպես և արտադրանքի ծավալով աչքի էր ընկնում Տաթևի վանքին պատկանողը: Սա սպասարկում էր նաև շրջակա մի շարք գյուղերին և մեծ եկամուտ էր տալիս վանքի միաբանությանը:

Տաթևի սրանուցը տիպիկ էր ոչ միայն Զանգեզուրի, այլև հարևան հայաբնակ գավառների համար: Գրականության մեջ կա Գանձակի նահանգի Գետաշեն (Զայքենդ) գյուղի սրանուցի նկարագրությունը[87]: Նա իր տեխնիկական սարքավորումով շատ չնչին մանրամասնություններով էր տարբերվում Տաթևի վանքինից:

Տաթևի սրանուցը կառուցված էր վանքի պարիսպներից դուրս, անշուշտ այն նկատառումով, որ մասնավոր պատվիրատուները կարողանան ազատ ելևմուտք ունենալ, առանց վանքի ներքին կյանքը խանգարելու: Դա տաշած քարերով խնամքով շարված շենք էր՝ երեք հիմնական բաժիններից բաղկացած: Առաջին բաժինը մի երկար ընդարձակ սրահ էր, որի մեջտեղ հենց դռան առջև ցածրիկ պատով օղակաձև շրջապատված կալն էր կամ բակը[88]: Կալի կենտրոնում ցցված էր ամուր կիսասյուն՝ 70—75 սմ բարձրությամբ, որի գլխին նստեցրած էր երկար հաստ ձող՝ նէտ, մի ծայրը երկար, մյուսը կարճ: Երկար ծայրը դուրս էր գալիս կալի օղակավորող պատի սահմաններից, կարճը՝ ոչ: Երկարը հարմարեցրած էր եզ կամ գոմեշ լծելու[89] կամ մարդկանց ուժով առաջ մղելու համար: Կարճը ծառայում էր որպես առանցք ուղղահայաց կանգնեցրած ահագին և հաստ, 1,40 մ տրամագծով, 0,50 մ հաստությամբ երկանաքարի՝ քարաղի համար: Երկանաքարը գլորվելիս իր եզրի ամբողջ լայնությամբ ընդհուպ պառկում էր հատակին: Սրահի աջակողմյան նեղ պատի տակ սարքված էր բարձր քարաշեն բովարան, ուր բարձրանում էին մի քանի աստիճաններով: Բուն բովարանը մի քառակուսի ավազան է, որի հատակն ամբողջական բարակ սալ էր՝ սաջ: Սալը տաքացվում էր տակից հնոցի մեջ վառվող փայտով: Ծուխը հեռացվում էր պատի մեջ շինված ծխանավ: Կտավհատը նախ խանձվում էր այդ բովարանի մեջ, սաջի վրա և ապա տեղափոխվում էր կալը՝ բակը և փռվում երկանաքարի տակ: Նէտի երկար ծայրը լծված եզան կամ գոմեշի ուժով, կամ մի քանի մարդու բրդելով, առաջ էր շարժվում, իսկ կարճ ծայրին երկանաքարը սկսում էր հակառակ ուղղությամբ գլորվել՝ սրէլով՝ տրորելով կտավհատը: Ստացված ալյուրը մաղում էին և նորից փռում երկանաքարի տակ, այս անգամ խառնելով տաք ջրի հետ: Նորից քարի տակ տրորելուց հետո ստացվում էր խմոր, որն անցնում էր երկրորդ սրահը, որտեղ քամվում էր ճնշող մամուլի օգնությամբ:

Երկրորդ սրահի հատակը զանազան բարձրություն ունեցող երեք հրապարակների էր բաժանվում: Դռնից ձախ կողմում ամենացածրադիր հրապարակն[90] է, միջինը նրանից մի աստիճան բարձր է, իսկ աջակողմյանը՝ նեղ պատի տակինը, քարաշար թումբ է, ուր բարձրանում են մի քանի աստիճան-

---

87 *Джейранов Ф.*, Сел. Чайкенд Елисаветпольск. уезда той же губ., СМОМПК, вып. XXV, отд. II, էջ 77:

88 Գետաշենում՝ սէղան:

89 Եզների և գոմեշների համար որպես բովլա՝ գոմ ծառայում էր երրորդ բաժինը, որտեղ պատի տակ շինված էին մսուրներ:

90 Գետաշենում՝ մրին տուն: